ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի
ՉՈՐՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 57-Լ

«20 » մայիսի 2025թ. ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով.
Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի 2025 թվականի մայիսի 20-ի չորրորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հ/Հ Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Հ/Հ Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1. Դիանա Գասպարյան				8. Վարդան Գրիգորյան			
2. Արսեն Պետրոսյան				9. Կարեն Մովսիսյան			
3. Էդվարդ Ափոյան				10. Գոհար Նիկողոսյան			
4.Նաիրա Բասենցյան				11. Վահան Հախվերդյան			
5. Արամայիս Միրզոյան				12. Հրաչյա Ավետիսյան			
6. Գևորգ Ղազարյան				13. Աննա Կիրակոսյան			
7. Ներսես Մելիքյան				14. Արտաշես Բաղդասարյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Վաղարշապատ համայնքի ավագանու
Յոթերորդ նստաշրջանի
2025 թվականի մայիսի 20-ի
Չորրորդ նիստի թիվ 57-Լ որոշման

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25 - Ի N 111-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ՝ ՏՎՅԱԼ ՕԲՅԵԿՏԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ ՁՄԵՌԱՅԻՆ ՄԵՋՈՆՆԵՐԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՀԱՄԱՊԱՏՍԱԽԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 58-Ն

«20» մայիսի 2025թ | ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25 - Ի N 111-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի և 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Վաղարշապատ համայնքի 2025 թվականի բյուջեի հաստատման մասին» թիվ 111-Ն որոշման և նշված որոշմամբ հաստատված թիվ 1, թիվ 2 և թիվ 3 հատվածների մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հ/Հ Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Հ/Հ Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1. Դիանա Գասպարյան				8. Վարդան Գրիգորյան			
2. Արսեն Պետրոսյան				9. Կարեն Մովսիսյան			
3. Էդվարդ Ավոյան				10. Գոհար Նիկողոսյան			
4.Նաիրա Բասենցյան				11. Վահան Հախվերդյան			
5. Արամայիս Միրզոյան				12. Հրայր Ասլանյան			
6. Գևորգ Ղազարյան				13. Աննա Կիրակոսյան			
7. Ներսես Մելիքյան				14. Աղասի Բաղդասարյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հավելված
Հաստատված է
ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի
ավագանու 20-ի մայիսի 2025 թ.
թիվ 58-Ն որոշմամբ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԹԻՎ 1 ՀԱՏՎԱԾԸ

1. Բյուջեի եկամուտներ՝ հատված 1 Հազար դրամ

No	ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2025թ. ծրագիր
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	3760723.6
1.	ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	656000,0
1)	Անշարժ գույք	147000.0
2)	Գույքահարկ շենքերից	10000,0
3)	Գույքահարկ փոխադրամիջոցներից	486000,0
4)	Հողի հարկ	13000,0
2.	ՏՈՒՐՔԵՐ	156460.7
1)	Պետական տուրքեր	45000,0
2)	Տեղական տուրքեր	111460.7
3.	ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	530333.0
1)	Գույքի և հողի վարձակալությունից եկամուտներ	40650.0
2)	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-ի կողմից վարչական պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ	1500.0
3)	Տեղական վճարներ	472683.0
4)	Այլ ոչ հարկային եկամուտներ	15500
5.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ	2417929.9
1)	Դոտացիա	1400827.5
2)	Այլ դոտացիա	
3)	Այլ ընթացիկ դրամաշնորհ /զինծառայողներ/	
4)	Փոխատվություններ /սուբվ./	3050.4
5)	Պատվիրակ. լիազոր. իրական. համար ստացվող միջ.	5997.0
6)	Միջազգային կազմակերպություն /ֆոնդային/	
7)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	908055.0
6.	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	100000.0

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԹԻՎ 2 ՀԱՏՎԱԾԸ

2. Բյուջեի ծախսերն ըստ գործառնական դասակարգման՝ հատված 2 Հազար դրամ

No		2025թ. ծրագիր

	ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	4113226.6
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	456710.0
1)	Տեղական ինքնակառավարում	456710.0
2	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ	955571.4
1)	Նախադպրոցական դաստիրակություն	636471.4
2)	Արտադպրոցական կրթություն	319100.0
3.	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (այլ դասերին չպատկանող)	20000,0
4.	ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ	348760.0
1)	Գրադարաններ	59100.0
2)	Մշակույթի տներ	62724.0
3)	Թանգարաններ	32878.0
4)	Սպորտ	152598.0
5)	Այլ ծրագրեր	41460.0
5.	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	812392.7
6.	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-146000.0
7.	ՀԻՄՆԱԿԱՆ ԽՄԲԻՆ ՉԴԱՍՎՈՂ ԾԱԽՍԵՐ	1665792.5
1)	Կապիտալ տրանֆերտ	908055.0
2)	Միջազգային կազմակերպություն	
3)	Այլ ծրագրեր /ֆոնդ. բյուջե/	583200.3
4)	Վարչական մասի պահուստային ֆոնդ	174537.2

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԹԻՎ 3 ՀԱՏՎԱԾԸ

3. Բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման՝ հատված 3 Հազար դրամ

No	ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2025 թ ծրագիր
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	4113226.6
1.	Ընթացիկ ծախսեր	2667971.3
1)	Աշխատավարձ	757900.0
2)	Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	138900.0
3)	Էներգետիկ ծառայություններ	117516.9
4)	Կոմունալ ծառայություններ	1534.3
5)	Կապի ծառայություններ	6380.2
6)	Ապահովագրական ծախսեր	3700.0
7)	Ներքին գործուղումներ	500,0
8)	Արտասահմանյան գործուղում	3000,0

9)	Համակարգչային ծառայություն	500,0
10)	Տեղեկատվական ծառայություններ	1000,0
11)	Ներկայացուցչական ծախսեր	1500,0
12)	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	58436.5
13)	Մասնագիտական ծառայություն	4000,0
14)	Շենք. և կառույց. ընթաց. նորոգ.	19000.0
15)	Մեք. և սարք. ընթ. նորոգում.	11000,0
16)	Գրասենյակային նյութեր և հագուստ	8500.0
17)	Տրանսպորտային նյութեր	99934.7
18)	Առողջապահական և լաբորատոր նյութեր	500,0
19)	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	1000,0
20)	Հատուկ նպատակային այլ նյութեր	46000.0
21)	Սոց. օգնության նպաստներ բյուջեից	35000.0
22)	Սուբսիդիաներ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	1262871.4
23)	Ընթացիկ դրամաշնորհներ միջազ. կազմակերպություններին	600,0
24)	Այլ ընթացիկ դրամաշնորհներ	1000,0
25)	Այլ կապիտալ դրամաշնորհներ	960.0
26)	Այլ հարկեր	9200,0
27)	Քաղաքացիական պաշտպանություն	3000,0
28)	Պահուստային ֆոնդ	174537.2
2.	Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	583200.3
1)	Նախագծահետազոտական ծախսեր	22500.0
2)	Շենք. շինությ. կապ. նորոգ.	530200.3
3)	Տրանսպորտային սարքեր	
4)	Վարչական սարքավորումներ	25500.0
5)	Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր	5000.0
6)	Պահուստային ֆոնդ	
3.	Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	862055.0
1)	Անշարժ գույքի իրացումից մուտքեր	-16000,0
2)	Հողի իրացումից մուտքեր	-130000,0
3)	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	100000.0
4)	Կապիտալ տրանֆերտ	908055.0
5)	Միջազգային կազմակերպ. մուտքեր	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վաղարշապատ համայնքի ավագանու «Վաղարշապատ համայնքի 2025 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին» 2025 թվականի որոշումը կատարելու, բյուջեի ֆոնդային մասի եկամուտների ավելացումը Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է իրականացնել հետևյալ փոփոխությունները

1. Հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 111-Ն որոշումը.

1.1. Համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի միջոցներից կատարել հատկացում համայնքի ֆոնդային բյուջե 100000.0 հազ. դրամ:

1.2. Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսերը ավելացնել 100000.0 հազ. դրամ և ուղղել Ճանապարհային տրանսպորտի /բաժին 04, խումբ 5, դաս 1/ <Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում> հոդվածին /հոդ. 5113/:

2. Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Վաղարշապատ համայնքի ավագանու 2025 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 59-Ն

«20» մայիսի 2025թ. ք.Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ՝ ՏՎՅԱԼ ՕԲՅԵԿՏԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԱՄԱՌԱՅԻՆ (ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ը ՆԵՐԱՌՅԱԼ) ԵՎ ՁՄԵՌԱՅԻՆ (ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ԱՊՐԻԼԻ 30-Ը ՆԵՐԱՌՅԱԼ) ՍԵԶՈՆՆԵՐԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հ/Հ Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Հ/Հ Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1. Դիանա Գասպարյան				8. Վարդան Գրիգորյան			
2. Արսեն Պետրոսյան				9. Կարեն Մովսիսյան			
3. Էդվարդ Ափոյան				10. Գոհար Նիկողոսյան			
4.Նաիրա Բասենցյան				11. Վահան Հախվերդյան			
5. Արամայիս Միրզոյան				12. Հրայր Ավետիսյան			
6. Գևորգ Ղազարյան				13. Անահիտ Պիրումյան			
7. Ներսես Մելիքյան				14. Արտակ Բաղդասարյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հաստատված է ՀՀ Արմավիրի մարզի
Վաղարշապատ համայնքի
Ավագանու 20.05.2025թ.
թիվ 59-Ն որոշմամբ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ՝ ՏՎՅԱԼ ՕԲՅԵԿՏԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԱՄԱՌԱՅԻՆ (ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ը ՆԵՐԱՌՅԱԼ) ԵՎ ՁՄԵՌԱՅԻՆ (ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՊՐԻԼԻ 30-Ը ՆԵՐԱՌՅԱԼ) ՍԵԶՈՆՆԵՐԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում (այսուհետ՝ Տարածք) ամառային (մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգի, պայմանների ու սահմանափակումների հետ կապված հարաբերությունները:

2. Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց տվյալ օբյեկտին հարակից տարածքներում ամառային (մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվությունները տրամադրում է Վաղարշապատ համայնքի ղեկավարը, եթե ներկայացված դիմումը համապատասխանում է սույն հավելվածով սահմանված պահանջներին:

2. ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

3. Թույլտվություն ստանալու համար դիմումատուն Վաղարշապատ համայնքի ղեկավարին ներկայացնում է էլեկտրոնային կամ թղթային եղանակով դիմում, որին կից ներկայացվում են:

1) անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական հաշվառման, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման քաղվածքը,

2) Դիմումատուի շենքի կամ շինության սեփականության կամ օգտագործման վկայականի պատճենը,

3) տեղական տուրքի վճարման անդորրագրի պատճենը,

4) էսքիզ առաջարկ՝ սույն հավելվածի 3-րդ գլխում սահմանված պահանջներին համապատասխան:

4. Դիմումների մուտքագրումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին գրավոր եզրակացություն են ներկայացնում Աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժինը՝ էսքիզ առաջարկի վերաբերյալ, իսկ Վաղարշապատի համայնքապետարանի «Բարեկարգում տնօրինություն» բյուջետային հիմնարկը գրավոր եզրակացություն՝ Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 14-ի թիվ 54-Ն որոշմամբ սահմանված պարտադիր բարեկարգման պահանջների կատարման:

5. Եթե թույլտվությունը ստանալուց հետո հաջորդ տարիներին սույն հավելվածի 3-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերի փոփոխություններ չեն կատարվել՝

դիմումին կից ներկայացվում են միայն տեղական տուրքի վճարման անդորրագրի պատճենը, բացառությամբ, եթե տեղի է ունեցել քաղաքաշինական իրավիճակի փոփոխություն, տվյալ դեպքում կրկին պետք է ներկայացվեն սույն կարգի 3-րդ կետով սահմանված փաստաթղթերը:

6. Դիմումը ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում թղթային կամ էլեկտրոնային եղանակով դիմումատուին տրվում է համապատասխան թույլտվություն կամ դիմումը մերժվում է: Դիմումը մերժվում է եթե՝

1) սույն կարգի 3-րդ կետով սահմանված փաստաթղթերը ներկայացվել են թերի (այդ թվում՝ տեղական տուրքի գումարը վճարվել է Վաղարշապատ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված դրույքաչափից պակաս), եթե դիմումատուն չի կարող տեղում շտկել և/կամ լրացնել թերի ներկայացված փաստաթղթերը,

2) սույն կարգի 3-րդ կետով սահմանված փաստաթղթերը ներկայացվել են ամբողջական, սակայն դրանք չեն համապատասխանում սույն հավելվածով սահմանված պահանջներին, բացառությամբ այն դեպքերի եթե ներկայացրած փաստաթղթերում հայտնաբերված սխալները, ջնջումները, քերվածքները, վրիպակները շտկվեն փաստաթղթերը ներկայացնողի կողմից կամ փաստաթղթերում առկա ակնհայտ սխալները, վրիպակները վերջիններիս ներկայությամբ ինքնուրույն ուղղվեն դրանք ընդունող անձի կողմից:

Վարչական մարմինն իրավունք չունի չընդունելու սույն մասում նշված փաստաթղթերը միայն այն պատճառով, որ դրանք պարունակում են նման սխալներ, ջնջումներ, քերվածքներ կամ վրիպակներ:

3) սույն հավելվածի 4-րդ կետով նշված մարմինների կողմից տրվել է բացասական եզրակացություն:

7. Հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքը տրամադրվում է.

1) բացառապես տվյալ սեզոնի ընթացքում հանրային սննդի ծառայություն կազմակերպելու համար, որտեղ ապահովելով ոչ պակաս, քան մայթի 1,8 մետր լայնությամբ ազատ անցուղին կարող են տեղադրվել համապատասխան սպասարկումն ապահովելու համար անհրաժեշտ սեղաններ ու աթոռներ, շարժական պահարան, տարածքին էսթետիկական պատշաճ տեսք արտահայտող ծաղկային կոմպոզիցիաներ կամ համանման այլ էլեմենտներ, բազրիքներ, ինչպես նաև հովանոցներ կամ առանց կրող կամ լրացուցիչ հենասյուների տեղադրում պահանջող ծածկոցներ,

2) շինությանը կից հատվածից մինչև մայթի եզրը, բացառությամբ կանաչապատ գոտին և հետիոտնի երթևեկության համար նախատեսված ազատ անցուղին,

3) մայթի նույն ուղղությամբ գտնվող սրճարաններին ճակատից հավասար հեռավորության վրա:

8. Հանրային սննդի ծառայության կազմակերպման համար թույլատրվում է տեղադրել սեզոնային սրճարանի սարքավորումների տարրեր՝ դրանց ամրացման տարրերի խորացմամբ մինչև 0,3 մետր: Սեզոնային սրճարանի ապամոնտաժման ժամանակ սույն կետում նշված սարքավորումների ամրացման տարրերը նույնպես ենթակա են ապամոնտաժման:

9. Սեզոնային սրճարանի կահավորման մեջ օգտագործվող հովանոցները կարող են լինել կամ միագմբեթ կամ բազմագմբեթ՝ կենտրոնական հենարանով.

1) հովանոցների և բուսակամարների (պերգոլաների) գմբեթի բարձրությունը չպետք է գերազանցի շենքի, կառուցվածքի առաջին հարկի բարձրությունը (առաջին և երկրորդ հարկերի միջև), որը զբաղեցնում է հանրային սննդի օբյեկտը,

2) սեզոնային սրճարաններ կազմակերպելիս վրանների օգտագործում չի թույլատրվում:

10. Սեզոնային սրճարանի կահավորման մեջ օգտագործվող դեկորատիվ ցանկապատերը տեղադրվում են մեկ գծով՝ սեզոնային սրճարանի տեղակայման սահմաններում: Ընդ որում.

1) սեզոնային սրճարանների կազմակերպման մեջ օգտագործվող դեկորատիվ ցանկապատերի բարձրությունը չի կարող լինել 0,6 մետրից պակաս (բացառությամբ ցանկապատի գործառույթ կատարող կանաչապատման կոնտեյներների տեղադրման դեպքերի) և գերազանցել 0,9 մետրը,

2) դեկորատիվ ցանկապատերի կոնստրուկցիաները, որոնք դասավորված են ասֆալտբետոնե (մայթի սալահատակային) ծածկույթի վրա, պետք է պատրաստված լինեն կոշտ հատվածներից, որոնք ամրացված են միմյանց կայունությունը ապահովող տարրերով,

3) դեկորատիվ ցանկապատերի կոնստրուկցիաները չպետք է պարունակեն տարրեր, որոնք վտանգ են ներկայացնում հետիոտնի երթևեկության անվտանգության համար:

11. Ձմեռային սեզոնին տարածքի կահավորման համար թույլատրվում է տարածքը կահավորել ոչ ստացիոնար (ժամանակավոր և հավաքվող), ամուր դեկորատիվ պոլիէթիլենային պլաստիկե թաղանթով կամ օրգանական ապակեպատմամբ: Ամառային սեզոնի ընթացքում նշված սարքավորումներն ենթակա են ապամոնտաժման:

12. Թույլտվությունը ստանալուց հետո թույլտվություն ստացած անձը պարտավոր է.

1) Տարածքում կազմակերպվող ծառայությունների իրականացման ողջ ժամանակահատվածում ապահովել Տարածքին հարակից կամ անմիջականորեն ներառող հատվածներում հետիոտնի համար նախատեսված մայթերի կամ անցուղիների գոտիների լիարժեք ազատ միջավայրը՝ հաշվի առնելով նաև բնակչության տեղաշարժման դժվարություններ ունեցող խմբերի մատչելիությունն ապահովելու անհրաժեշտությունը,

2) թույլտվությամբ սահմանված ժամկետի ավարտից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում տարածքն ազատել և բերել նախկին տեսքին:

13. Հանրային սննդի սեզոնային ծառայությունն արգելվում է կազմակերպել.

1) կանաչապատ տարածքներում,

2) օգտագործելով աղյուսներ, շինարարական բլոկներ և սալեր, մոնոլիտ բետոնի, երկաթբետոնի և պողպատե պրոֆիլավորված թիթեղներ,

3) իրականացնելով ստորգետնյա ինժեներական հաղորդակցուղիների անցկացում և կապիտալ բնույթի շինմոնտաժային աշխատանքներ,

4) կահավորման համար օգտագործելով ամառանոցային, պարտեզային և ինտերիերի կահույք:

3. ՏԱՐԱԾՔԻ ԿԱՀԱՎՈՐՄԱՆ ԷՍՔԻԶ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

14. Տարածքի կահավորման էսքիզ նախագիծը ներառում է տեքստային և գրաֆիկական նյութեր:

15. Տեքստային նյութերը կազմվում են բացատրական գրության տեսքով և ներառում են հիմնական ճարտարապետական և կոնստրուկտիվ լուծումների նկարագրությունը՝ նշելով օբյեկտի հարաչափերը, կոնստրուկցիաների նյութերը և գույները:

16. Գրաֆիկական նյութերը ներառում են.

1) առկա իրավիճակի լուսանկարներ՝ առանց սեզոնային սրճարանի տեղակայման: Լուսանկարները պետք է ապահովեն սեզոնային սրճարանի գտնվելու վայրի ամբողջական հստակ ցուցադրումը,

2) որակավորման վկայական ունեցող անձի կողմից տրամադրված տարածքի չափագրության տեղագրական հանույթը և իրադրության հատակագիծը՝ 1:500 կամ 1:200 մասշտաբով, որտեղ նշվում են տարածքի ուրվագծային չափերը և մակերեսը,

3) գծագրեր (ճակատներ, հատակագծեր՝ կահավորման տարրերով, կտրվածքներ, հիմնական կառուցվածքային տարրեր, ամրացման տարրեր և սարքավորումների այլ տարրեր)՝ 1:200 մասշտաբով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ՝ ՏՎՅԱԼ ՕԲՅԵԿՏԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԱՄԱՌԱՅԻՆ (ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ը ՆԵՐԱՌՅԱԼ) ԵՎ ՁՄԵՌԱՅԻՆ (ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ԱՊՐԻԼԻ 30-Ը ՆԵՐԱՌՅԱԼ) ՍԵԶՈՆՆԵՐԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը.

«Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները սահմանելու մասին» համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.3-րդ կետի պահանջի կատարումով: Օրենքի նշված պահանջը ձևակերպվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-426-Ն օրենքով, որն ուժի մեջ է մտել 06.01.2022 թվականից: Անհրաժեշտ է Վաղարշապատ համայնքում սահմանել նորմատիվ իրավական պահանջներ՝ ըստ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-426-Ն օրենքով կատարված լրացմանը համապատասխան համայնքի ավագանին կարգավորում չի տվել ոլորտին, մինչդեռ դրա անհրաժեշտությունը բխում է ոչ միայն իրավական, այլ նաև՝ առաջացող իրավահարաբերությունների կարգավորման պահանջից: Համայնքում նման գործունեության ծավալումը իրատեսական է, ինչի կարգավորումը պահանջում է համայնքի ավագանու համապատասխան որոշում:

3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման վերը նշված նախագիծը ընդունելու արդյունքում ակնկալվում է կանոնակարգել հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման գործունեությունը հատկապես Էջմիածին քաղաքի տարածքում: Որպես զբոսաշրջային և հոգևոր կենտրոն՝ այստեղ կարևոր է նշված գործունեության պատշաճ կազմակերպումը՝ նորմատիվ պահանջներին համապատասխան, որից բացի՝ հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց կողմից կիրականացվի իրենց օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքների պարտադիր բարեկարգման պահանջների կատարումը:

4. Իրավական ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը

Նշված որոշման նախագիծը կրում է նորմատիվ բնույթ, քանի որ պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ համայնքի վարչական տարածքում անորոշ թվով անձանց համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող. 3/8
հեռ.՝ (+374) 10 59 40 96
էլ.փոստ՝ edgar.hovsepyan@justice.am

№ /27.1/21438-2025
«15» մայիսի 2025թ.

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՏԻԿԻՆ ԴԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Գասպարյան,

Ի պատասխան Ձեր՝ 2025 թվականի ապրիլի 23-ի թիվ 1655 գրության՝ կից ներկայացվում է «Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային և ձմեռային սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները սահմանելու մասին» ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Recoverable Signature

X

ԷԴԳԱՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Signed by: HOVSEPYAN EDGAR 3808920963

ԷԴԳԱՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Վաղարշապատ համայնքապետարան
Մուտք՝ 1416
«16» մայիսի 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային և ձմեռային սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները սահմանելու մասին» ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

1.«Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային և ձմեռային սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները սահմանելու մասին» ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերնագրում «ԱՄԱՌԱՅԻՆ» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «(ՄԱՅԻՍԻ 1-Ի Ց ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ը ՆԵՐԱՌՅԱԼ)» բառերը, իսկ «ՁՄԵՌԱՅԻՆ» բառից հետո լրացնել՝ «(ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ԱՊՐԻԼԻ 30-Ը ՆԵՐԱՌՅԱԼ)» բառերը՝ նկատի ունենալով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.3-րդ կետի և նախագծի 1-ին կետի պահանջները:

2.Նախագծի հավելվածի անվանումից անհրաժեշտ է հանել «ՆԱԽԱԳԻԾ» բառը:

3.Նախագծի հավելվածի 4-րդ կետում անհրաժեշտ է հստակեցնել, թե որ մարմինն է ներկայացնում եզրակացություն և որը՝ կարծիք:

4.Նախագծի հավելվածի 5-րդ կետում անհրաժեշտ է պարզաբանել, թե քաղաքաշինական իրավիճակի փոփոխության դեպքում ինչ փաստատթղթեր են

ներկայացվելու, մասնավորապես, արդյոք ներկայացվելու են հավելվածի 3-րդ կետում նշված փաստաթղթերը:

5. Նախագծի հավելվածի 6-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշվում է դիմումը մերժելու հիմքերը, մասնավորապես, եթե 3-րդ կետով սահմանված փաստաթղթերը ներկայացվել են թերի կամ փաստաթղթերը ներկայացվել են ամբողջական, սակայն դրանք չեն համապատասխանում սույն հավելվածով սահմանված պահանջներին:

Այդ առումով հարկ է նկատի ունենալով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 41-րդ հոդվածի պահանջները, որոնց համաձայն՝ վարույթի մասնակիցների ներկայացրած փաստաթղթերում սխալներ, ջնջումներ, քերվածքներ, վրիպակներ հայտնաբերելու դեպքում վարչական մարմինը պարտավոր է այդ փաստաթղթերը ներկայացնողների ուշադրությունը հրավիրել դրանց վրա՝ շտկելու նպատակով, ինչպես նաև նրանց ներկայությամբ, ինքնուրույն ուղղել ներկայացված փաստաթղթերում առկա ակնհայտ սխալները, վրիպակները:

Վարչական մարմինն իրավունք չունի չընդունելու սույն մասում նշված փաստաթղթերը միայն այն պատճառով, որ դրանք պարունակում են նման սխալներ, ջնջումներ, քերվածքներ կամ վրիպակներ:

Վերոգրյալի համատեքստում նախագիծն անհրաժեշտ է խմբագրել:

**Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ՝**

5/15/2025

X

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Signed by: KARAPETYAN MARGARITA 5111830715

Մ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությամբ արված դիտողությունների և առաջարկությունների

1. Արդարադատության նախարարություն	15.05.2025թ. №/27.1/21438-2025 գրության
1. ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերնագրում «ԱՄԱՌԱՅԻՆ» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «(ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ը ՆԵՐԱՌՅԱԼ)» բառերը, իսկ «ՁՄԵՌԱՅԻՆ» բառից հետո լրացնել՝ «(ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ԱՊՐԻԼԻ 30-Ը ՆԵՐԱՌՅԱԼ)» բառերը՝ նկատի ունենալով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.3-րդ կետի և նախագծի 1-ին կետի պահանջները:	Ընդունվել է.
2. Նախագծի հավելվածի անվանումից անհրաժեշտ է հանել «ՆԱԽԱԳԻԾ» բառը:	Ընդունվել է.
3.Նախագծի հավելվածի 4-րդ կետում անհրաժեշտ է հստակեցնել, թե որ մարմինն է ներկայացնում եզրակացություն և որը՝ կարծիք:	Ընդունվել է.
4. Նախագծի հավելվածի 5-րդ կետում անհրաժեշտ է պարզաբանել, թե քաղաքաշինական իրավիճակի փոփոխության դեպքում ինչ փաստաթղթեր են ներկայացվելու, մասնավորապես, արդյոք ներկայացվելու են հավելվածի 3-րդ կետում նշված փաստաթղթերը:	Ընդունվել է.
5. Նախագծի հավելվածի 6-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշվում է դիմումը մերժելու հիմքերը, մասնավորապես, եթե 3-րդ կետով սահմանված փաստաթղթերը ներկայացվել են թերի կամ փաստաթղթերը ներկայացվել են ամբողջական, սակայն դրանք չեն համապատասխանում սույն հավելվածով սահմանված պահանջներին: Այդ առումով հարկ է նկատի ունենալով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 41-րդ հոդվածի պահանջները, որոնց համաձայն՝ վարույթի մասնակիցների ներկայացրած փաստաթղթերում սխալներ, ջնջումներ, քերվածքներ, վրիպակներ հայտնաբերելու դեպքում վարչական մարմինը պարտավոր է այդ փաստաթղթերը ներկայացնողների ուշադրությունը հրավիրել դրանց վրա՝ շտկելու նպատակով, ինչպես նաև նրանց ներկայությամբ, ինքնուրույն ուղղել ներկայացված փաստաթղթերում առկա ակնհայտ սխալները, վրիպակները: Վարչական մարմինն իրավունք չունի չընդունելու սույն մասում նշված փաստաթղթերը միայն այն պատճառով, որ դրանք պարունակում են նման սխալներ, ջնջումներ, քերվածքներ կամ վրիպակներ:	Ընդունվել է. Կատարվել է կետի լրացում

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Էջմիածին 19 մայիսի 2025թ.
Ժամը 11:00

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ մայիսի 19-ին Վաղարշապատի համայնքապետարանի նստերի դահլիճում (հասցե՝ ք. Էջմիածին, Մ.Մաշտոց 0) կայացավ Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային և ձմեռային սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները սահմանելու մասին հանրային քննարկում:

Ելույթներ.

Մ. Պողոսյան – Բացման խոսքով հանդես եկավ համայնքի ղեկավարի խորհրդական, հանրային քննարկման պատասխանատու Մ. Պողոսյանը, նշելով, որ հանրային քննարկման ծանուցումը 2025թ. ապրիլի 18-ից տեղադրված է եղել համայնքային կառավարման տեղեկատվական հարթակում: Վերջինս ընդգծեց, որ մասնակցության ապահովման նպատակով, համայնքապետարանի Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի աշխատակիցները այս մասին պատշաճ իրազեկել են նաև տնտեսվարողներին:

Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային և ձմեռային սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները սահմանող նախագիծը ներկայացնելու համար Մ. Պողոսյանը խոսքը փոխանցեց Վաղարշապատի համայնքապետարանի Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ռաֆայել Զիրոյանին:

Ռ. Զիրոյան - Ռ. Զիրոյանը ներկայացրեց, որ Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց տվյալ օբյեկտին հարակից տարածքներում ամառային (մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվությունները տրամադրում է Վաղարշապատ համայնքի ղեկավարը, եթե ներկայացված դիմումը համապատասխանում է սույն հավելվածով սահմանված

պահանջներին:Այնուհետև ներկայացրեց հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները.

1. Թույլտվություն ստանալու համար դիմումատուն Վաղարշապատ համայնքի ղեկավարին ներկայացնում է էլեկտրոնային կամ թղթային եղանակով դիմում, որին կից ներկայացվում են.

1) անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական հաշվառման, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման քաղվածքը,

2) Դիմումատուի շենքի կամ շինության սեփականության կամ օգտագործման վկայականի պատճենը,

3) տեղական տուրքի վճարման անդորրագրի պատճենը,

4) էսքիզ առաջարկ՝ սույն հավելվածի 3-րդ գլխում սահմանված պահանջներին համապատասխան:

2. Դիմումների մուտքագրումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին գրավոր եզրակացություն են ներկայացնում Աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինարարության բաժինը՝ էսքիզ առաջարկի վերաբերյալ, իսկ Վաղարշապատի համայնքապետարանի «Բարեկարգում տնօրինություն» բյուջետային հիմնարկը գրավոր եզրակացություն՝ Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 14-ի թիվ 54-Ն որոշմամբ սահմանված պարտադիր բարեկարգման պահանջների կատարման:

3. Եթե թույլտվությունը ստանալուց հետո հաջորդ տարիներին սույն հավելվածի 3-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերի փոփոխություններ չեն կատարվել՝ դիմումին կից ներկայացվում են միայն տեղական տուրքի վճարման անդորրագրի պատճենը, բացառությամբ, եթե տեղի է ունեցել քաղաքաշինական իրավիճակի փոփոխություն, տվյալ դեպքում կրկին պետք է ներկայացվեն սույն կարգի 3-րդ կետով սահմանված փաստաթղթերը:

4. Դիմումը ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում թղթային կամ էլեկտրոնային եղանակով դիմումատուին տրվում է համապատասխան թույլտվություն կամ դիմումը մերժվում է: Դիմումը մերժվում է եթե՝

1) սույն կարգի 3-րդ կետով սահմանված փաստաթղթերը ներկայացվել են թերի (այդ թվում՝ տեղական տուրքի գումարը վճարվել է Վաղարշապատ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված դրույքաչափից պակաս), եթե դիմումատուն չի կարող տեղում շտկել և/կամ լրացնել թերի ներկայացված փաստաթղթերը,

2) սույն կարգի 3-րդ կետով սահմանված փաստաթղթերը ներկայացվել են ամբողջական, սակայն դրանք չեն համապատասխանում սույն հավելվածով սահմանված պահանջներին, բացառությամբ այն դեպքերի եթե ներկայացրած փաստաթղթերում հայտնաբերված սխալները, ջնջումները, քերվածքները, վրիպակները շտկվեն փաստաթղթերը ներկայացնողի կողմից կամ փաստաթղթերում առկա ակնհայտ սխալները, վրիպակները վերջիններիս ներկայությամբ ինքնուրույն ուղղվեն դրանք ընդունող անձի կողմից:

Վարչական մարմինն իրավունք չունի չընդունելու սույն մասում նշված փաստաթղթերը միայն այն պատճառով, որ դրանք պարունակում են նման սխալներ, ջնջումներ, քերվածքներ կամ վրիպակներ:

3) սույն հավելվածի 4-րդ կետով նշված մարմինների կողմից տրվել է բացասական եզրակացություն:

5. Հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքը տրամադրվում է.

1) բացառապես տվյալ սեզոնի ընթացքում հանրային սննդի ծառայություն կազմակերպելու համար, որտեղ ապահովելով ոչ պակաս, քան մայթի 1,8 մետր լայնությամբ ազատ անցուղին կարող են տեղադրվել համապատասխան սպասարկումն ապահովելու համար անհրաժեշտ սեղաններ ու աթոռներ, շարժական պահարան, տարածքին էսթետիկական պատշաճ տեսք արտահայտող ծաղկային կոմպոզիցիաներ կամ համանման այլ էլեմենտներ, բազրիքներ, ինչպես նաև հովանոցներ կամ առանց կրող կամ լրացուցիչ հենասյուների տեղադրում պահանջող ծածկոցներ,

2) շինությանը կից հատվածից մինչև մայթի եզրը, բացառությամբ կանաչապատ գոտին և հետիոտնի երթևեկության համար նախատեսված ազատ անցուղին,

3) մայթի նույն ուղղությամբ գտնվող սրճարաններին ճակատից հավասար հեռավորության վրա:

6. Հանրային սննդի ծառայության կազմակերպման համար թույլատրվում է տեղադրել սեզոնային սրճարանի սարքավորումների տարրեր՝ դրանց ամրացման տարրերի խորացմամբ մինչև 0,3 մետր: Սեզոնային սրճարանի ապամոնտաժման ժամանակ սույն կետում նշված սարքավորումների ամրացման տարրերը նույնպես ենթակա են ապամոնտաժման:

7. Սեզոնային սրճարանի կահավորման մեջ օգտագործվող հովանոցները կարող են լինել կամ միագմբեթ կամ բազմագմբեթ՝ կենտրոնական հենարանով.

1) հովանոցների և բուսակամարների (պերգոլաների) գմբեթի բարձրությունը չպետք է գերազանցի շենքի, կառուցվածքի առաջին հարկի բարձրությունը (առաջին և երկրորդ հարկերի միջև), որը զբաղեցնում է հանրային սննդի օբյեկտը,

2) սեզոնային սրճարաններ կազմակերպելիս վրանների օգտագործում չի թույլատրվում:

8. Սեզոնային սրճարանի կահավորման մեջ օգտագործվող դեկորատիվ ցանկապատերը տեղադրվում են մեկ գծով՝ սեզոնային սրճարանի տեղակայման սահմաններում: Ընդ որում.

1) սեզոնային սրճարանների կազմակերպման մեջ օգտագործվող դեկորատիվ ցանկապատերի բարձրությունը չի կարող լինել 0,6 մետրից պակաս (բացառությամբ ցանկապատի գործառույթ կատարող կանաչապատման կոնտեյներների տեղադրման դեպքերի) և գերազանցել 0,9 մետրը,

2) դեկորատիվ ցանկապատերի կոնստրուկցիաները, որոնք դասավորված են ասֆալտբետոնե (մայթի սալահատակային) ծածկույթի վրա, պետք է պատրաստված լինեն կոշտ հատվածներից, որոնք ամրացված են միմյանց կայունությունը ապահովող տարրերով,

3) դեկորատիվ ցանկապատերի կոնստրուկցիաները չպետք է պարունակեն տարրեր, որոնք վտանգ են ներկայացնում հետիոտնի երթևեկության անվտանգության համար:

